ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 ապրիլի 2025 թվականի թիվ 71 – Ա

ԱՐՏՈՒՇ ԱՐՄԵՆԱԿԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆԱՎՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 61-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման և բողոքարկման կարգի» 6-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նավուրի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Արտուշ Արմենակի Վիրաբյանի 2025 թվականի ապրիլի 7-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

Արտուշ Արմենակի Վիրաաբյանին 2025 թվականի ապրիլի 7-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նավուրի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը /նշանակումը/:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-04-08 08:44:43 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025թ. ապրիլի 7
ք. Իջևան